ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) գիտահետազոտական գործունեությունը նպատակաուղղված է գիտության՝ որպես Համալսարանի ռազմավարական գերակայություններից մեկի զարգացմանը: Առաջնահերթ է Համալսարանը որպես զարգացած գիտակրթական հաստատություն կայացնելը, ինչը նաև տարածաշրջանում գիտահետազոտական գործունեության զարգացման գրավական է: Այդ նպատակով կարևոր է հանրապետական և միջազգային նշանակության գիտահետազոտական գործունեության ծավալումը՝ մարդկային և նյութական ռեսուրսների ներդրմամբ:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման սույն քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանվում են Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական նպատակն ու խնդիրները:

2.2. Սույն Քաղաքականության իրավական հիմքերն են Համալսարանի կանոնադրությունը, Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը, ՀՀ օրենքը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», ՀՀ կառավարության 25.12.2008թ. N1558-Ն որոշումը «ՀՀ-ում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին», ՀՀ օրենքը «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին», ինչպես նաև այլ իրավական ակտեր:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման *հիմնական նպատակը* բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով հետազոտությունների իրականացման զարգացումն է՝ միջազգայնացման, ուսումնառության հետ կապի ու գիտակրթական կառույցների հետ համագործակցության ընդլայնման ապահովմամբ:

3.2. Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման *հիմնական խնդիրներն են.*

3.2.1. Համալսարանում գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանումը, դրանց զարգացման խթանումը,

3.2.2. կրթական բոլոր աստիճաններում ուսումնական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրումը, մասնավորապես, հանրակրթություն-բարձրագույն կրթություն - հետազոտություն - նորարարություն «քառակուսու» ձևավորումն ու հետագա զարգացումը,

3.2.3. գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի շրջանում գիտահետազոտական գործունեություն իրականացնելու հմտությունների զարգացումը,

3.2.4. գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերում գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի ներգրավվածության խթանումը,

3.2.5. միջազգային բարձր վարկանիշավորմամբ գիտական ամսագրերում, միջազգային գիտաժողովների ժողովածուներում տպագրության խթանումը,

3.2.6. հանրապետական և միջազգային գիտաժողովներին գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի մասնակցության խթանումը,

3.2.7. ՀՀ և օտարերկրյա գիտակրթական կառույցների հետ գիտական համագործակցության ընդլայնումը,

3.2.8. Լավագույնների խրախուսումը՝ վերջնարդյունքում ակնկալելով ունենալ լավագույնս մոտիվացված գիտահետազոտական գործունեություն ծավալող աշխատակից և/կամ ուսանող:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն Քաղաքականությունը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ:

4.2. Սույն Քաղաքականությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: